

բանի ի ներկայութեան ամենայն երեւեակաց հայոց հասարակութեան յայտնեցէ նախ վասն առաքելական պատուիրանացն թէ՛ ճանաչել պարտ է զվաստակաւորս և զըբարեբարս. և յայտնեցէ ամենեցուն նոցա վասն բարեբարութեանց ձերում աճեցեալ որդւոյ Աղայ Յովսէփայ Յոհաննիսեան առ աղքատս ժողովրդեան իւրեանց հասարակութեան, և առ սուրբ Ամենափրկչի՛ վանսն նաեւ աննուազ առաւելութեամբ առ սուրբ կաթողիկէն Էջմիածնի մայրն հաւատոյ ամենայն Հայոց և այնպէս ապա հանդերձ մերովս լիարեւոյն օրհնութեամբ զգեցուցէ զձեզ զայն ոսկեթել ծաղկեայ կապայ և որպէս յառաջ՝ այսմ հետէ առաւել քան զայն ընկալցի զձեզ և զորդի ձեր արժանաւոր սիրով և յարգանօք և եղիցի ամենայնիւ նա ձեզ որպէս հայր հոգեւոր, և դուք նմա որպէս հայր ծաղկեալ ձերութեամբ:

Եւ յուսամ թէ որպէս նա լինելոց է

մեծարող, այնպիսի առաջադրութեանց մերոց, նոյնպէս և դուք լինիցիք ոչ նուազ քան զնա, որով ունիք իսկապէս ուրախ առնել զԱստուած և զհրեշտակս նորա՝ զմեզ բազմօք առաւել, առ որ և մեք կրկին շնորհակալութեամբ լինելոց եմք միշտ ձեզ օրհնաբանս:

Ո՛ղջ լեւուր, և ողորմութիւն Տեառն զօրասցի միշտ ի վերայ ձեր և որդւոց ձերոց և օրհնութիւն սրբոյ Լուսաւորչին հանդերձ շնորհօք գերագահ Աթոռոյ նորա եղիցի հանապազ ի վերայ ձեր և ընդ հոգւոց ձերոց: Ամէն:

Գրեցաւ 1823, յամսեանն մարտի 12, ի սուրբ վանս Հաղբատ:

Վասն ձեր աղօթարար կաթողիկոս ասմենայն Հայոց Եփրեմ:

ԻՐԱՋԵԿ

1. Ամենափրկչի վանքը գտնուում է Նոր-Ջուղայում և Հայոց ամենանշանաւոր վանքերից մէկն է:



ՄԻՋՆԱՐԱՐԵԱՆ ՀԱՅ ՏԱՂԱՍՍՑՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

## ԱՆՏԻՊ ՏԱՂԵՐ ԵՒ ՓՈՓՈԽԱԿՆԵՐ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹԼԿՈՒՐԱՆՑՈՅ

Կենսագրական հարեանցի ակնարկ մ'իսկ միտք չունիմ ընելու միջնադարեան այս ծանօթ բանաստեղծին վրայօք, այլ պարզապէս 1931ին Չամառ և Երուսաղէմ Ս. Յակոբեանց մատենադարանի ձեռագրաց մէջ գտած Թլկուրանցւոյ անտիպ և փոփոխակ եղող տաղերը ծանօթացնել և հոս հրատարակել է նպատակս: Այս տաղասացին կենսագրական աշխատանքով զբաղած են երկու ծանօթ գրիչներ, որոնք յուսամ շուտով կ'աւարտեն իրենց ուսումնասիրութիւնը և հրատարակելով զբանքը հասարակութեան տրամադրութեան տակ կը դնեն:

«Անահիտ» ի նոր շրջանի, Ա. տարի, թիւ 1, էջ 47, Ա. Չօպանեան հրատարակեց «Անտիպ տաղ մը Յովհաննէս Թլկուրանցւոյ», որուն համար ծանօթութեամբ մէջ կ'ըսէր թէ «օրինակած ենք Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքի թիւ 1521 ձեռագրէն, զանձարան՝ գրուած Երուսաղէմ, ՌձՁԳ թուին (1734)». վերնագիր՝ «Ի Յովսէփայ Թլկուրանցւոյ է»: Ես ալ այս նոյն տաղիս օրինակին հանդիպեցայ Ս. Պօլսէն Լիբանանի Չամառ Հայ կաթողիկէ վանքը փոխադրուած ըլլալով՝ այս յիշեալ ձեռագիրն ալ հոն կը գտնուէր 1931ին, երբ առիթ ունեցայ հոն կատարած ուսումնասիրական այցելութեան մը շնորհիւ տեսնել այս քայքայուած, թղթեայ

անյիշատակարան, բոլորգիր ձեռագիրը, և սակայն տաղին խորագիրը կը տարբերէ Տիար Ա. Չօպանեանի հրատարակածէն: Նորագիւտ օրինակին խորագիրն է

«Ի Յովսէփայ Թլկուրանցւոյ ձ՞՞ (150) Հայրապետացն ասացեալ»:

Իբր սրբագրելի ըստ նորագիւտ օրինակիս հետեւեալները կը նշանակեմ.

|                |           |                    |           |
|----------------|-----------|--------------------|-----------|
| Բ տող տպագիրը՝ | անկող     | Անտոնեանց օրինակը՝ | անկող     |
| Ե »            | գերտռակ.  | »                  | գերտռակ   |
| ԺԳ »           | զայնօք    | »                  | զայնօք    |
| ԻԲ »           | երկրայիկք | »                  | երկրայիկք |

Անտոնեանցը տպագրին պէս օ չունի, այլ առ: Ըստ իս ասոնք սրբագրելի կէտեր են:

Չամառի ձեռագիրներէն թիւ 99 տաղարան մըն է որմէ (էջ 20 ա) քաղելով առաջին անգամ ըլլալով կը հրատարակեմ և կը ծանօթացնեմ Թլկուրանցւոյ բոլորովին անտիպ և անծանօթ հետեւեալ գեղեցիկ և երկար տաղը:

### ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹԼԿՈՒՐԱՆՑՈՅ ԱՍՍՅԵԱԼ ԲԱՆ ԱՂՈԹԱԿԱՆ

Ըզբեզ աստուած խոստովանիմ, երկըրպագեմ և հաւատամ, Գեզ գոհութիւնըս դըրւատեմ, թէ ասելոյ արժանանամ: Զըսքանչելիս քո հըռչակեմ, քեզ գոհութիւն և փառքս տամ, Ի քէն հայցեմ և պաղատիմ, աղերսանօք և գոհանամ: Դու ողորմած և մարդասէր, քո ստեղծածոց ես բարեկամ, Անոխակալ ես ու անյիշաչար, յամենայնի ամենախընամ: Յոյս կենաց քաւիչ մեղաց, ամէնառատ տուրք և քարամ, Կատարիչ խընդրուածոց, այնու յուսով առ քեզ կուգամ: Մի տար ինձ տէր սիրտ անարգի, որ ի բարոյ դատարկ մընամ, Եւ կամ լինել ամպ ցամաքեալ, որ հետ ամպեմ և ոչ ցողամ: Զաչերս իմ լից յորդ արտասուօք, որ զմեզս անձին իմ լըւանամ, Միացոյ զիս ի քոյ սէրդ, որ թէ տըկար եմ զօրանամ: Հով քուրա եմ գործել մ, կայծ փըչեմ յիս որ հըրանամ, Հեղզ և ծոյլ եմ գըլորած, կանգնեմ զանկեալս որ ժըրանամ: Բանաւորեալ մեղքն ի մարմինս, դիժար կուգայ որ հեռանամ, Պահքն և աղօթքն է իմ բըժիշկ, որ պահելով արդարանամ: Նայ հենց փափակ եմ մընացեալ, զոր ըզմարմինըս կոէ հոգամ, Սընուցի որդանցըն ճաշ, գիտեմ յօժար ի կեր գընամ, Ըզքօ ծընօղն ունիմ միջնորդ, որ քո տեսոյդ արժանանամ: Քանանացին եմ կողկողեալ, Պետրոս յալեացըս կու կոծամ, Մաքսաւորն եմ հառաչմամբ, կոծեմ ըզկուրծս և ի հետ լամ: Անգամալոյծն եմ եւ տընանկ, քաղցր խօսեց որ զօրանամ: Տեռտես կիին եմ կարկամ, ինձ այց արա որ զօրանամ, Հայր մեղա՛ ասեմ յերկինս թէպէտ արժան չորդիանամ, Սուրբ արա զիս ի մեղաց, այնու քո սուրբ է յարժամ: Զարքայութիւնդ երեւեցո, որ երկընչիմ զօրն և դողամ: Հեռացո զիս յիմ կամաց, որ ի քո կամըդ միանամ: Զօր հանապազ օր ըստ օրէ, զիս կերակրէ որ լիանամ, Մի տար զիս տէր ի փորձութիւն, զի յորըն չեմ որ զիմանամ: Ապրեցո՛ տէր զիս ի չարէ, չարէ որ ոչ կարել ժուժամ, Զի քո փառք և զօրութիւն, ալքայ հըզօր և փառքս տամ:

ԵՍ ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹԵՂԼԳՈՒՐԱՆՅԻ, ողորմութիւնը քո յուսամ,  
 Զիս լուսացդ արժանացոյ, ի գալըստեան քո միւս անգամ:  
 Սուրբ սրտիւ գրեզ հաւատամ, ի յոգնութիւն ինձ ժամանեա,  
 Ես առաջի քո անկանիմ, հառաչանօք ասեմ մեղայ:  
 Անյոսից յոյս ապաւէն, տէր իմ ի քեզ վըստահացա,  
 Հան զանկեալս ի վիճ զըբո, զոր պատրաստեաց ինձ սատանայ:  
 Դարձոյ ի չար սովորութեանց, և ի բարին ինձ յաջողեա,  
 Հան ի սըրտէս զսէր աշխարհիս, զիս ի քոյ սէրըտ բորբոքեայ:  
 Դիր դուռն ամուր շըրթանց իմոյ, որ հանապազ գեարին խոկմ,  
 Առողջացոյ զըվէրս հոգոյս, որ ի դիւաց հաւաճեցա:  
 Աստուած քաւեա ըզմեղաւորս, տէր իմ զըթած ինձ ողորմեա,  
 Տէր իմ զըթած ես և ողորմած, ես քո արեամբ զընեալ ծառայ:  
 Անկեալ կորեա կործանեցա, մոլորեցա գայթակղեցա,  
 Որպէս զանօթ խորտակեցա, ապականեալ ի սպառ եղծա:  
 Ըստ քոյդ մեծի ողորմութեան, մեղաւորիս տէր ողորմեայ:  
 Եւ ըստ բազում քո զըթութեանդ, ըզմոլորեալըս ժողովեա:  
 Անթիւ չարեօք շողախեցա, լըւա մաքրեայ և սուրբ արա,  
 Փորձեա զիս տէր իմ և քընեա, ի ճանապարհըս քո ուղղեա:  
 Եւ զոր տեսակ մեղաց յիս կայ, ողորմութեամբըդ քո ջընջեա,  
 Զի ոչ ոք է տէր ինձ պատճառ որ զպատուիրանս քո մոռացա:  
 Զի ոչ ոք տէր ի մարդկանէ, քո առաջի արդարանա:  
 Տէր ողորմեա տէր ողորմեա, զմեղս իմ քաւեա և փարատեա,  
 Ի յանցանաց անմեղ արայ, քան զձիւն լըւա և սուրբ արա:  
 Ըզբեզ ունիմ յոյս ապաւէն, ամէն ողորմ և կեցուցիչ,  
 Կենդանացո զմեղօք մեռեալս, կենդանութեան մեր պարգեւիչ:  
 Կատարիչ խընդըրածաց, լեր և իմոցըս կատարիչ,  
 Մեղաւոր եմ մեղաւոր, մեղաւորաց դու ես քաւիչ,  
 Զհինկ զգայարանս իմ պահպանեա, եղականացըդ պահպանիչ,  
 Որ աւագակըն չմտանէ, աւագակաց լեր հայուցիչ:  
 Քըննօղ զաղտնեաց տեսող գործոց, մոլորելոց ես դարձուցիչ,  
 Թէպէտ և մեղքն իմ բազմազան, շատ քան զաւագ և զքար և զխիճ:  
 Տուր ինձ միայն ըզբեզ սիրել, որ հուր սիրոյ ես բորբոքիչ,  
 Ի յանցանաց տըղմոյ լըւայ, որ մեղանաց ես լըւացիչ:  
 Սպիտակացո զխաւար հոգիս, որ սեւացաւ քան զսեւ կըճիճ,  
 Բարերար բնութիւն բարի, վիրաց իմոց լեր դարմանիչ:  
 Համբարձի զաչս իմ առ քեզ, աստուած և հայր և տէր փրկիչ,  
 Տուր ժամանակ ապաշխարել, գոչել առ քեզ և բառնալ ճիչ,  
 Լալ և հայցել և պաղատիլ, որ արտասուքն դառնա ի լիճ,  
 Թէպէտ աւուրք իմ կարճացաւ, և ժամքըս շատ ի չիք դարձաւ:  
 Յովհաննէս լըռեալ մեղօք, երգըդ բարոյ է յորդորել,  
 Այլ ի լերինըն կատարել, թէ աւելոյդ լինէս լսել,  
 Եւ քեզ փառք այժմ և յապայ, երբեակ անձինըտ մըշտակա,  
 Հօր և որդւոյ և սուրբ հոգւոյդ, օրհներգութիւն զանազանեայ:

Տաղիս վերջին հինգերորդ տողը այնպէս ենթադրել կու տայ ինձ որ Թղլու-  
 րանցի զայս գրած է իր ձերութեան ատեն:  
 Այս նոյն ձեռագրին էջ 87ա կայ զարձեալ Յովհաննէս Թղլուրանցւոյ ուղիւ  
 տաղ մը, որ հրատարակուած է Կոստանեանցի կողմէ ժամանակին, բայց միայն

տուն, ուրիշ տեղ հրատարակուելը անձանօթ կը մնայ ինձ. ես հոս կը վերհրատա-  
 րակեմ այդ տաղը, ըստ Անտոնեանց ձեռագրին, 10 տուն այսինքն Կոստանեանցի  
 օրինակէն մէկ տուն աւելի:

ԲԱՆՔ ՅՈՎՀԱՆՍԷ ԱՍՍՅԵԱԼ ՎԱՍԵ ԱՍՏ ՍԻՐԵԼԵԱՅ

Իմ սիրտ լըսէ և ականջ արա՛,  
 Որ սիրելի իսկի չըկա,  
 Ոչ դըրացի և ոչ եղբայր,  
 Ոչ միակեց և ոչ քահանա:

Այս ժամանակըս հընցող կա,  
 Ով որ չգիտէ թող գիտենա,  
 Զով որ գիտես խիստ սիրելի,  
 Հուրն ի գեհէն ի դուրս կուգա:

Թէպէտ չինէս շատ սիրելի  
 Մի հաւատար սըրտովդ ի նա,  
 Յամէն դիհաց փորձէ ու տես  
 Ի ապա զխորհուրդ ասա նորա:

Շատ մարդ յերեստ է քաղցրախօս,  
 Ի սիրտըն հուր կու բորբոքա,  
 Սեղնի լինի սուտ սիրելի,  
 Փորձութեան ժամն ուրախանա:

Քանի ողջ ես դու գրեզ պահէ,  
 Դըլխուտ և անձինըտ պէտ արա,  
 Թէ հաքիմի կարիք լինիս,  
 Կեանքըդ քան զհով անցնի զընայ:

Թէ դու գըտնաս հանց սիրելի,  
 Որ քեզ դընէ զանձն ի վերա,  
 Նայ գընէ գրեզ իւր ծառա,  
 Դեռ իրաւանց կէսըն նորա:

Ի հետ անգետ սուտ սիրելուն,  
 Ով երկու խօսք առնու տա,  
 Նայ ականջո՞ղ հանց բան լըսէ,  
 Որ միտ դընէ և զարմանա:

Իշխանաց քաջ զինաւորն,  
 Յերագ սըրտնեղ տըրտում կենա,  
 Գայ մօտ քեզ նստի հրեշտակ,  
 Ելնէ երթայ քան զսատանայ:

Դու պահէ զսէրն ի կանգուն,  
 Սիրտըտ սիրով թող լինենա,  
 Ատելութեան տեղիք մի տար,  
 Որ բարութիւն երթա մընա:

Խէվ Յովանէս Թուկուրանցի,  
 Աղւոր պահէ զմիտքտ ի վըրայ,  
 Մարգասէրն աստուածասէր է,  
 Եղբայրատեացն է սատանայ:

Յ. ՔԻՐՈՍԵԱՆ